Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

2024 թվականի համայնքի բյուջեում փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատանքի ընթացքում առաջացած մի շարք խնդիրների լուծմամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

2024 թվականի ընթացքում համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով բյուջեում նախատեսվել էր 20 000,0 հազար դրամ: Գործընթացի իրականացման ընթացքում ներկայացված առաջարկ-նախագծերից քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Մասիս քաղաքի ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգման ծրագիրը: Նշված ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք բերելու և համապատասխան ընթացք տալու համար անհրաժեշտ է համայնքի ավագանու կողմից նախատեսած 20 000,0 հազար դրամը տեղափոխել համայնքի բյուջեի համապատասխան ծախսային ծրագիր: Նախատեսված 20 000,0 հազար դրամից 300,0 հազար դրամը նախագծանախահաշվային փաստաթղթերի արժեքն է, իսկ 30,0 հազարը՝ պարզ փորձաքննության:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ներկայումս իրականացվում է Մասիս քաղաքի 3-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքները, սակայն նախագծանախահաշվային փաստաթղթերում բացակայում է ջրահեռացման համար անհրաժեշտ կոմունիկացիաները, ուստի անհրաժեշտություն է առաջացել պատվիրել լրացուցիչ նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ նշված խնդրին լուծում տալու նպատակով: Վերոնշյալ փաստաթղթերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 120,0 հազար դրամ:

Բազմաթիվ բնակիչներ դիմել են խնդրանքով, այն մասին, որ Մասիս քաղաքի 4-րդ թաղամասը 5-րդ թաղամասին կապող ճանապարհային հատվածը գտնվում է անմխիթար վիճակում և անձրևների ժամանակ նույնիսկ մեքենայով անանցանելի է: Հաշվի առնելով այս հանգամանքը, անհրաժեշտ է ձեռք բերել նշված հատվածը հիմնանորոգելու փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 550,0 հազար դրամ:

2025 թվականին համայնքում սուբվենցիոն ծրագրերով ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է այս տարի ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքներ հետևյալ հասցեների համար"

- Դարակերտ գյուղի Հարություն Միրզոյանի անվան փողոցի մնացած՝ չհիմնանորոգված մաս /150 մետր երկարություն, 5 մետր լայնություն/ 330,0 հազար դրամ
- Դաշտավան գյուղի Տավուշի փողոց /350 մետր երկարություն, 6 մետր լայնություն/ 770,0 հազար դրամ
- Այնթապ գյուղի 14-րդ փողոցի 1-ին նրբանցք /150 մետր երկարություն, 6 մետր լայնություն/ 330,0 հազար դրամ:

Մասիս քաղաքի Արարատյան, Կենտրոնական հրապարակ և Հանրապետության փողոցների արտաքին լուսավորության ցանցը համալրվել է նոր, ավելի հզոր լուսատուներով, որի պատճառով հոսանքի հզորությունը չի բավականացնում և որպեսզի ցանցն աշխատի անխափան անհրաժեշտ է 630 ԿՎԱ հզորության հոսանք, որի միացման արժեքը կազմում է 13 000,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Ծախսեր*	*Ֆոնդային մասի Ծախսեր*	
				Ծախսեր				
1	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-13000,0		
2				**Վարչական սարքավորումներ**	5122		-2100,0	
3				**Նախագծանախահաշվային աշխատանքներ.** մասնակցային բյուջետավորում	5134		-20000,0	
4	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Նախագծանախահաշվային աշխատանքներ /4-րդ թ/մ 5-րդ թ/մ կապող ճանապարհ. հատվածի հիմնանորոգման/	5134		500,0	
5				փորձաքննություն	5134		50,0	
6				Նախագծանախահաշվային աշխատանքներ /Դարակերտ գյուղի Հ. Միրզոյան փողոցի հիմնանորոգման/	5134		300,0	
7				փորձաքննություն	5134		30,0	
8				Նախագծանախահաշվային աշխատանքներ /Դաշտավան գյուղի Տավուշի փողոցի հիմնանորոգման/	5134		700,0	
9				փորձաքննություն	5134		70,0	
10				Նախագծանախահաշվային աշխատանքներ /Այնթապ գյուղի 14-րդ փողոցի հիմնանորոգման/	5134		300,0	
11				փորձաքննություն	5134		30,0	

12	**06**	**3**	**1**	**Ջրամատակարարում.** ք. Մասիս 3-րդ փողոցի ջրահեռաց. համակարգի կառուցման նախագծանախահաշվ. աշխ.	5134		120,0	
13	**06**	**4**	**1**	**Արտաքին լուսավորություն.** Արարատյան, Կենտրոնական հրապարակ և Հանրապետության փողոցների լուսավորության ցանցը 630 ԿՎԱ ենթակայնին միացում	4823	13000,0		
14	**09**	**5**	**1**	**Արտադպրոցական դաստիարակություն.** ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգում./մասնակցային բյուջետավորում/	5113		19670,0	
15				**Նախագծանախահաշվային աշխատանքներ.** մասնակցային բյուջետավորում	5134		300,0	
16				փորձաքննություն	5134		30,0	
						0,0	***0,0***	
				Ընդամենը				

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ